

Ներածություն

Սպառողների լայն շրջանին ուղղված վիճակագրական սույն ժողովածուում արտացոլվել է հանրապետության բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսության գործունեությունը բնութագրող ամփոփ տվյալների դինամիկան և 2020թ. վիճակագրական ցուցանիշների քանակական վերլուծությունը: Իրավիճակի արտացոլման ցուցանիշների ընտրությունը կատարվել է՝ ելնելով միջազգային համադրելիության ապահովման անհրաժեշտությունից, ինչպես նաև ներքին օգտագործողների պահանջներից:

Ժողովածուի կազմման համար հիմք են ծառայել Վիճակագրական կոմիտեի (ԱՐՄՍՍՍՍ) կողմից հավաքագրված վիճակագրական տվյալները, հանրապետության մի շարք նախարարությունների ու գերատեսչությունների, մարզպետարանների և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանցում գործող վարչական ռեզիստրների, ինչպես նաև կազմակերպությունների ամփոփ տվյալները: Վիճակագրական տեղեկատվություն տրամադրողների շրջանակը որոշվել է համապատասխան գերատեսչությունների հետ համատեղ՝ հիմք ընդունելով իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանի և գերատեսչական մարմինների վարչական ռեզիստրների տվյալները: Բնակարանային ֆոնդի հաշվառման մասով վարչական ռեզիստրների կողմից տրամադրված ժամանակային շարքերում փոփոխությունները ներառում են ոչ միայն նոր շահագործման հանձնված բազմաբնակարան շենքերի բնակարանների ընդհանուր մակերեսները (այսուհետ՝ բնակմակերեսներ), այլև այլ կատեգորիաներից բնակմակերեսների վերափոխվածները, նախորդ ժամանակաշրջաններից շահագործված կամ չշահագործված, սակայն հաշվետու ժամանակաշրջանում օրինականացված՝ սեփականության իրավունքը գրանցած բնակմակերեսները, այդ թվում կցակառույցների, լրակառույցների և այլ տեսքերով, ինչպես նաև նախկինում վարչական հաշվառումից դուրս մնացածները:

Ժողովածուում ներառված են հետևյալ բաժինները. բնակարանային ֆոնդ, բնակարանային ապահովվածություն, անշարժ գույքի շուկա, բնակչության, կոմունալ-կենցաղային տնտեսության և արտադրության ջրամատակարարում, կոյուղացում, գազաֆիկացում, քաղաքային բնակավայրերի սանիտարական մաքրում ու բարեկարգվածություն: Բաժիններն ավարտվում են հիմնական ցուցանիշների վիճակագրական դինամիկ շարքերով:

Վիճակագրական կոմիտեն իր երախտագիտությունն է հայտնում Կադաստրի կոմիտեին՝ խորհրդատվական ծառայությունների և առանձին բաժինների խմբագրական աշխատանքների համար:

Հուսով ենք, ժողովածուն կարող է տեղեկատվական հիմք հանդիսանալ սոցիալ-տնտեսական քաղաքականություն մշակողների և այն իրականացնողների, գիտակրթական գործունեությամբ զբաղվողների և վերլուծաբանների, ինչպես նաև հանրության լայն շրջանների համար:

Ժողովածուն պատրաստել է Վիճակագրական կոմիտեի սոցիալական ոլորտի վիճակագրության բաժինը:

Պայմանական նշաններ

երևույթը բացակայում է	–
վիճակագրական տվյալներ չկան	...
չնչին մեծություն	0.0